

Ընթերցողք անշուշտ առիթ ունեցած են արիշ տեղ Դրանակլուանիոյ Հայոց, շազրայի կամ տօնավաճառի վրաններուն վրայ կարդալու: — Ինչպէս որ յայտնապէս կ'երեւայ, մասնաւոր արտօնութիւն մըն էր, տօնավաճառներու ատեն, առեւտրոյ վրաններ կանգնել ու անոնց մէջ ներեալ առեւտրոյ նիթերը ծախել: Այս բանս ընելու, ամէն ազգ ու ամէն մէկ մասնաւոր մարդ իրաւունք չունէր:

Արաֆի Ա. և Արաֆի Բ. Դրանսիլուանիոյ իշխաններուն, ինչպէս նաև կարողոս Զ. կայսեր ու Մարիամ թերեղիայ կայսրուհոյն արտօնութեանց կոնվակներուն հնաւութեամբ. Հրաման սփուցցաւ Եղիսաբեթուպուսոյ հայոց, որ աէրութեան որ և է կողմն ազատութեամբ առուառը կարենան ընել: Վրան անունը՝ թէպէտ չի յիշուիր այն արտօնութեանց պատմէններուն մէջ. սառ կայն կ'ենթապուի, որ ծախուելու ապրանքը տեղ մը պիտ'որ զետեղուէր, հովէ, անձրեւէ, ձիւնէ և այլն պահպանելու համար: Աս բանա, երկիրն ընդհանուր սովորութիւնն էր եղած:

Շարայարելի

Ա. Փիփաս.

ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ



(Տես յէջ 273)

— 200 —

ՊՈՒՄԱՆՈՍ Դիօգինեսէն առաջ, որով այնշափ համբաւաւոր եղաւ Այլակերպութեան վանքը՝ որիշ երեւելի անձինք ալ հոս բանտուած են:

Միքայէլ Ռանկապէին հրաժարումը և Լևոն Հայկազնոյն կայսրութեան յափշաակումը պատմեցինք: Այս վերջինս թէպէտ չէլ սկսաւ իր կայսրութիւնը, բայց մեծ կայսեր յատկութիւններ ցըցուց: Պուլկարներուն յաղթեց, որոնց յարձակմունքները վերջին կայսերք չէին կրցած արզիլել, և որք երկու անգամ իր գահակալութեան առեն եկեր էին մինչև Բիւկանփիոնի գոսրը: Վերջապէս խաղաղութեան պայմաններ կնքեց անոնց հետ, որ իր մահաւընէն վաթսուն տարի վերջին ալ վեռ կը տեէր: Միայն այս գործոց համար՝ Լևոնի կայսրութեան ժամանակն՝ որ թէպէտ շատ քիչ տևեց, թիւզանիոյ պատմութեան մէջ արժանի է յիշասակութեան: Դժբաղզարար իր կարծութեան և քաջութեան հետ՝ լևոն ունէր նենգութիւն, տղիտութիւն, և վերջին աստիճանի աւելորդապաշտութիւն: Իւր խոստմանց հակառակ՝ մեծ պնդութեամբ

պատկերամարտից կողմը անցաւ : Քիչ կայսերը այսպէս սաստիկ հալածած են պատկերաց յարգութիւնը : Պատկերները յարգողաց դէմ սաստիկ խսորաթեամբ և բարբարոսաբար կը վարուէր . Նիկեփորոս պատրիարքը աքսորեց և անոր տեղ զրաւ հերձուածող Գասիդերասը :

Առանց Լևոնի կայսրութեան ժամանակին վերայ խօսքն երկնցնելու, Լեւոնի վերջին ժամանակներուն կ'անցնի՛, որ միայն այս պատմութեան մէջ հարկաւոր է մեզի : Միկայէլ թշրւատն կամ Ամորիփոնցին որ աննշան ցեղէ Փոխազցի մըն էր, և պալատական զօրաց խումբին մէջ, Նիկեփոր Լոդութէսը մասնեց, ինչպէս տեսանց՝ ՚ի շնորհս Միկայէլ Ռանկապէին, զայս ալ ՚ի շնորհս Լևոնի մատնած էր. բնականապէս այս իւր վերջին տիրոջն ալ նոյն բանը պիտի ընէր : Այս անգամ՝ քիչ մնաց իրեն շատ տուղի պիտի նասէր իր նենգութիւնը :

Դաւաճանութիւնը յայսնուելով, որչափ որ ալ կայսրը գութ ունէր վրան, զատապարտուեցաւ որ նիգակ մը մորթմոյն մէկ կողմէն միւսն խոթուի, և ողջ ողջ այրուի պալատին բաղանեաց փոան մէջ :

Միկայէլին կողմանկից պատմագիրը կը հաստատեն թէ այս զատապարտութեան պատճառն էր, վան զի շատ անգամ Միկայէլ կը յանդիմանէր զկայսրն անոր պատկերամարտութեանը և իւր իսկ կնոջը հետ Լևոնին անպատշաճ վարմանցը համար : Այս բանս հանդիպեցաւ զեկսեմբեր ամսուն, 849 ին, Լևոն վեց աարիէ աւելի էր որ կը թագաւորէր : Քրիստոսի ծննդեան խթման զիշերը որոշուած էին վճառյն կատարումն . արդէն զահճները խեղճ բանտորիեալը յեղոնելու կը տանէին, երբոր թէոգոսիս կայսրուհին, որ կը տեսմուի թէ Միկայէլի վերայ գութ ունէր, շատ աղաջեց կայսեր, որ ասանի սուրբ օրը չպղծէ այնպիսի պահնամմբ, և Լեւոն ակամայ յանձն առաւ ուրիշ օրուան մը ձգելու վճոյն կատարում :

Սեւ նախազգացումներ զինքը կը տանձէին : Երկրորդ զիշերը չկրնալով քնանալ, և գէշ գուշակութիւններով միտքը նախապայմարուած, ուզեց ապահով ըլլալ թէ ի՞նչպէս իւր բանտօրիեալը պահպանուած է, և այն սենեակը զնաց որ զՄիկայէլ բանտուած էին : Շատ զարմացաւ երբ տեսաւ զանկայ, որ հանգիստ կը քնանար իւր պահպանին քով, որն որ իւր անկողնը իրեն տուած էր : Ոչ մին և ոչ միւր արթնցան, և Լևոն քաշուեցաւ կատաղութեամբ : Թէոգոնա վինակիրն, Միկայէլին կողմանկիցը՝ որ չէր ուզած բաժնուիլ իրմէն, պառկած էր մութ անկիւն մը : Մտազրութեամբ դիտեց կայսեր կատաղի շարժմանքը, և քնացողները արթնցոց : Միկայէլ որ իւր սպանութեան քանի մը օր ետ մնայուն վրայ քիշ մը յօյս առած էր, նորէն յուսահասութեան մէջ ինկաւ : Այս վերջին տաքնապին մէջ ուզեց վերջին ջանք մը ընել, որ հրաշքով յաջողեցաւ : Առաւոտուան գէմ, կայսեր խարեց թէորգիուաը, աղաչելով որ իրեն հրաման տայ իւր սովորական խոստվանահայրը աեսնելու : Այս բարեպաշտ փափաքն լսելով, Լևոն ապահովցած անանկ մարդու մը վրայ, որ մեռնելու մօտ կը կարծէր ինքզինքը, թոյլ տուաւ թէորգիոսի

որ կարենայ պայտաէն ելլել և քահանայն բնառուէլ։ Խակ թէոքդիոտ ընդհակաս ռակն վազեց Միքայէլ թղուատին հին կողմակիցներուն, որը իւր գաւաճաւ նութեանդ մասնակից եղած էին, և սպառնացաւ անսնց Միքայէլի կողմանէ, որ եթէ զինքը չազատեն՝ զիրենք կը մատնէ։ Այս սպառնալիքը դաւաճանաց միտքը ձգեց ճարտար հնարք մը։

Այսէն առառ ժամը շորսին ատենները, պաշտաին եկեղեցւոյն երգիչները և զպիրներն, որ պաշտաին մէջ չէին բնակեր, սոլորութիւն ունէին Եսիսէի ըստած գուռ ժողվուիլ, ուսկից Փարի Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ կը մացուէր։ Նոյն այն եկեղեցին՝ որ որ Միքայէլ Ռանկապէ ապաւինած էր, և այն ժամանակները կայսեր առանձին մասուուն եղած էր։

Երրոր այ բազմաթի հիւրերը ժողվուեցան՝ մասուուր մասն և առաւուեան ժամը սկսան, կայսերը, նոյն իսկ քիչ Հերմենանդ եղողներն ալ, կ'ըսէ լըսպոյ, կը ջանային չպակից այս առաւուեան ժամասացութենէն, երբ կոսս տանզնուպղուս կը գոնուէին։ Շատերը իրից զրօսանք մըն ալ կը սեպէին, անսնցմէ մէկն էր նաև Լևոն. որ անուշ ձայն ունենալուն կը պարզէր։ Վասն զի բարձր ձայն ունէր, և քիչ անգամ կը պակսէր այդ առաւուեան արարողութենէն, որն որ մեր ժամանակիս իշխանաց շատ ձանձրանալի կու փայ։ Տղայական զուարթութիւն մը կըզգար ստեղի սադմուներն, անվերջանալի շարականները սկսելու, և ամանակներն զարնելու փայան ձեռքը կ'առաջնորդէր զասի երգերուն։ Ծննդեան երկրորդ օրը Լևոն ամէն անգամնաւն պէս ճշշտիւ եկեղեցի ինջաւ։ օգը շատ ցուրտ էր, հիասային հովը աստոտիկ կը փշէր Ռումելիի բաց զաշտերուն վրայէն, և պաշտին երկայն սրահներուն մէջ և առած կամարներուն տակ բուռն մրիբկ կը հանէր։ Գիշերը մութ էր և հազի մոմերուն լոյսը քիչ մը կը լուսաւորէր։ Լևոն մասուուր մտաւ, ուր արդէն զպիրներն ժողվուած էին, իւր աթոռը ելաւ, և պատրաստուեցաւ սկսելու նշանը տալ։

Բոլոր ներկայք, կայսրն ալ, ցրտի պատճառաւ զուուխնին խոշոր կնգուղ մը ունէին, որ երեսնին կը ծածկէր և զիւրութեամբ մարդ կրնար խարսիլ։ Լևոն աշխաւուղ մը այս օրուան սազման սկսաւ, յանկարծ շփոթութիւն մը եւլաւ ժողովրդեան մէջ, ձայները բարձրացան, զինքերը վերարկուներու տակէն զուրս ելան, խոսվութիւն մը սկսաւ և զպիրներն վախերնէն փախան։ Միքայէլին կողմակից զաւաճաններն էին, որ վերարկուին և կնգուղին տակ ծածկուած, զէնքերնին զվետաներուն տակ, քահանայից հետ խառն եկեղեցի մտած էին, անտարակյու քահանայիցմէ ոմանք ալ վաստըկած ըլլալու էին։

Առաջ սիալելով աւագ քահանային վրայ յարձրեցան։ ծերունին իւր խոշոր կնգուղը վար առնըրով ցըցուց իր կունտ վլուխը։ Մարդասպահները ճգեցին զինքը և Լևոնին ետեւէն ինկան։ Առաջի շփոթութեան մէջ Լևոն ուզեր էր փախչիլ, բայց ժողովրդեան դրան մէջ խառնուելով և զաւաճանաց դոները բռնած ըլլալնաւն պատճառաւ։ Հրցաւ զուրս ելլել, և զնաց խօրանին ետեւը կզկրտած պահուըտեցաւ։ Սոսկայի և ահաւոր կոփ մը սկսաւ. բոլորովին

մութը կոխեց + կանիթեջները ամենքն ալ մարտած էին : Բոլոր քահանայր և եկեղեցին զանուած իշխանները փախան, պոռալով կանչարոտելով, միայն զաւաճանաց խումբը մնացած էր որ իրենց օրսին վրայ յարձակեցան : Կայսրը կարճահասակ էր, բայց արագաշարժ և ուժով . խորանին տակը մոտած, ուրով և ձեռքովը ինք զի՞նքը կը պաշտպանէր . սկիզբօծ պղնձէտ մեծ խաչ մը ձեռքը առած էր, անով ինքզի՞նքը կը պաշտպանէր հարուածներուն դէմ: Վերջաւ պէտ հոգնած, ուժէ ընկած, տեսաւ . հսկայի մը պէտ մարդ մը, այսինքն կոսաննուալումեցի Գրամբնիսաց ընտանիկէն մէկը, որ վերջին հարուածը իրեն պիտի իջեցնէր . ներողութիւն սրոաց . — հիմայ ներողութեան ժամը չէ, կանչեց միւսը, այլ վրէժիսրութեան . վերջը ժանր սուրը ինչաւ, և մէկ հարուածով մը խաչին թեւը և կայսեր ուսը մէկաեղ տարաւ: Լևոն ինկաւ խորդալով, դաւաճանները զբոխը կտրեցին, մարմինը կտոր կտոր ըրին: Նիկեւարոս աքսորեալ պատրիարքը, այս բանս լսելով, հառաչեց . « Եռւնական եւ կեղեցին անգութ. թշնամիէ մը ազատեցաւ, բայց կայսրութիւնը հարկաւոր մարդ մը կորանցոց » :

Դաւաճանները Սուրբ Պալատին մէջը յարձրկեցան որ տակն ու վրայ եղած էր. Թրլաւատին բանսով վագեցին և առանց իսկ շղթանները կոսրելու՝ կայսերական զահին մեծ սրահը տարին, ուր անմիջապէս կայսր հրատարակեցին զի՞նքն: Գանուն վրայ նստած իշխանաւորաց յարգանքն ընդունելու առեն՝ շղթանները մուրճով մը կոսրեցին, որուն բանալիքը վերջը Լևոնի զգեստուց մէջ զանուեցաւ: Ժողովուրդը և զի՞նտորնները անտարբեր կեցան յեղափոխութեան մէջ, և քանի մը ժամ վերջը, պատրիերամարտ պատրիարքը թէոտորոս Գասիդէրաս, մայր եկեղեցւոյ մէջ, բոլոր ժողովրդեան առջև՝ կայսերական թագը զբա. Միշայէլի, որ առջի օրը զատապարտեալ էր պիտառուելու:

Իսկ թէոտոսին կայսրուհին՝ նոյնն՝ զօր երբեմ Պրոկոպիա արհամարհած էր, և որ իւր սպազանքովն ուշացունելով Միշայէլ թրլաւատին զիսատումն, պատճառու եղեր էր այս շարեաց, զողալով կը սպասէր իւր շօրս աղոցը հետքազարդութիւն հրամանաց, տղաքն էին, Սմբատ՝ որ կայսրութեան գործոց մէջ մտած էր կոստանդին անունով, բարսեղ, Գրիգոր և թէոտոս: Միշայէլ անզթացաւ ասկերախտութեամբ՝ և բատապարտեց խեղճերը աքսորել Բրոդի կղզոյն մէջ: Մայրը և տղացնները նաւակին մէջ նետեցին, և ահա սելի բեռ մ'ալ զրին նաւակին մէջ, կաշիէ տոպրակ մը, ուսկից արիւն կը վազէր, օրուն մէջ զրեր էին լևոնին կտոր կտոր եղած զիակը: Նաւակը շխտակ թշուառ կղզին ուղեւորեցաւ: Այն մարդուն մարմինը, որուն այնչափ անզամ հարիւրաւոր մարդիկ երկրապատճին ըրած էին, երբ ոսկիով և գոհարներով զարգարած գտնաւն վրայ էր, այն վանդին պարտէզին մէջ թալեցին, զոր Ծիոմանսու Գիովնէս նորացեց, և ետքն ալ իր խեղճ մահուամբը առնաւնի եղաւ: Իսկ թէոտոսիային մազերը կամեցին և խցիկի մը մէջ փակեցին, և եղաւ երկնից քաղաքացի մը, հրեշտակաց հագուստները հապած, ինչպէս որ կ'ըսեն ժամանակպիրք, իրենց սովորական եղած զրաբանութեամբն:

իսկ երիտասարդ իշխաններուն՝ Արքայէլ հրամայեց այն անազորոյն կըրս ճատումն, որ ողջ ողջ մեռնիլ մըն էր, և արևելեան պատմութեան զրեթէ ամէն երեսին մէջ կը յիշուի, Ասիոյ հին և զրեթէ առասպելախառն արքունիքներէն, մինչև թիւզանդիոյ վերջին կայսերաց ժամանակի ։ Խեղճերը ցաւէն պատաղով կանչուըստելով ներքինացան ։ Կրտսերագոյնը թէուս չկրցաւ այս սարսափելի ցաւուն զիմանալ, քիչ ատենէն մեռաւ. միա երեքը կրօնաւոր եղան նոր անուններով ։ Եղն ժամանակադիրը կ'աւելցընեն որ ձգեցին պատկերամութիւնը և խարերայ աշխարհցէն քաշուելով ապրեցան :

Արքայէլ իրենց պզոտիկ հասայթ մը կապեց, իրենց հօրմէն յափշտակած հարատութենէն և ծառայներէն մէկ քանին թողոց քայիրնին ։ Զգիւցուկոթէ մինչեւ իրենց մեռնիլը բրոդիի վանրը կեցան թէ ոչ :

Անկարեցի բան է համբել, թէ որչափ երեկելի մարդիկ զոհ երթալով՝ այս կղզին անուանի ըրած են. միայն մէկ համ մ'ալ կը յիշենք, տրուն զժբաղդութիւնը աւելի ցաւալի եղած է ։ Այն է անուանին վարդան որ թուրք ըսուած է :

Շարայարելի

ՇԻԳԱԿՈՅԻ ՍԵԾ ՑՈՒՑԱԿԱՆԴԵՍՆ

Ի ՄԱՅԻՍԻ 1

(Տիս յ'էջ 291)

ԱՅԹՅՈՐ Ամերիկայի պատմութեան յոյժ մեծ օրերէն մին է : Քոյոմ պեան ցուցահանդէսն որ յամաց հետէ ողջոյն քաղաքակիրթ աշխարհի խորհրդածութեանց առարկայն եղած էր՝ իւր դաներն բացաւ բոլոր ազգաց առջեւ ։ Շիզակօ աշխարհի պատմութեան մէջ նոր միջադէպ մը աւելցուց իւր այս մեծագործութեամբ ։ Երբ այսօրն անցեալ ըլլայ, պատանիք զառամին, եւ մանկունք ծերանան, ապագայի մարդկութիւնն իւր յայնժամանու մեծագոյն յառաջդիմութեամբ և զարգացմամբ՝ չպիտի թերանայ՝ երախտապարտ լինել ներկայի մարդկութեան, վասն այս հոկայ ձեռնարկութեան, իման Համաշխարհին հանգիսին, օրոյ ի շնորհա ազգերն լաւացոյն զիրար պիտի ճանաչեն, անհատք ի բարձր եւս վախճան եւ զարգացումն պիտի նկրտին ։ Մէկ նշանակութեամբ Մայիս 1ըն 1893ի մայր պիտի ըլլայ ապագայի բարձր նպատակաց եւ գործուց :

« Մպիտակ քաղաքն » որպէս կը կոշեն ձեքսըն-փարբի այն մասը՝ ուր կառուցուած են մեծ ու փաքք չէնքեր, առաւել քան 600 000 անձանց այցելաւ վայրն եղաւ այսօր ։ Համաշխարհային ցուցահանդէսն կրկնակի հետաքրքրական